ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ու Մ N19Ն

27.11.2015թվական

2016Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Սայաթ-Նովա համայնքի վարչական տարածքում 2016թ. համար սահմանել տուրքեր և վճարներ հետևյալ դրույքաչափերով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

Ա) Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական, բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար՝ 7500դրամ:

Բ) Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ,

բգ) 1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ,

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

Գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

Դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման արդիականացման, աշխատանքների (բացակայությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

Չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ: 1, 2, 3 կետերի համար կիրառված է 0,5 գործակիցը:

4. Համայնքի տարածքում՝

Ա) Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000դրամ:

Բ) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

Ա) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

Բ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սառնարանները/, խաղատները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

Ա) Առևտրի օբյեկտների համար 25000դրամ

Բ) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000դրամ

Գ) Բաղնիքների /սառնարանների/ համար 200000դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու ըստ յուրաքանչյուր տեղի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) Դատարկ գովազդային վահանակների համար՝ 700դրամ

բ) Այլ արտաքին գովազդի համար 500 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական ընթացիկ տուրքը սահմանվում է 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000դրամ:

10. Համայնքի տարածքում հողամասերի չափագրման հողերի չափերի ճշտման աշխատանքների կատարման համար տեղական տուրքի վճարը սահմանել 1000 դրամ:

11. Մրցույթի և աճուրդի մասնակցության վճար սահմանել 1000դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝ կենցաղային աղբի համար ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական10/տասը/դրամ:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Եփրեմյան Արման			
Զարգարյան Կամո			
Պետրոսյան Վազգեն			
Խաչատրյան Վլադիմիր			
Սաֆարյան Անդրոնիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N20

27.11.2015թվական

2016Թ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԱՑԻՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈՒԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Սայաթ-Նովա համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը և համայնքի մանկապարտեզ ՀՈՒԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը հետևյալ ձևով՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ Հազ.դրամ
Համայնքի Ղեկավար		250.0
Հայեցողական պաշտոններ		
Համայնքիղեկավարի տեղակալ	1	180.0
Համայնքային ծառայության պաշտոններ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	195.0
Գյուղապետարան իաշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	193.0
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	155.0
Գյուղապետարանիաշխատակազմի 1-ինկարգիմասնագետ /3.2-1/	1	125.0
Գյուղապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ /3.3-1/	1	120.0
Քաղաքացիական աշխատանք		
Անցուբավար	1	73.0
Գրադարանավար	1	73.0
Տեխսպասարկման անձնակազմ		
Հավաքարար	1	78.500
Վարորդ աղբահանության գծով	1	122.15
Պահակ	1	78.500

ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ Հազ.դրամ
Մանկապարտեզի տնօրեն	1	135000
Մանկապարտեզի դաստիրակ	2X1,25	110000
Դաստիրակի օգնական Դաստիրակի օգնական	1 1	78500 78500
Երաժիշտ	1	73000
Բուժքույր	1	78500
Հաշվապահ	1	85000
Տնտեսվար	1	85000
Խոհարար	1	80000
Խոհարարի օգնական	1	73000

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Եփրեմյան Արման			
Զարգարյան Կամո			
Պետրոսյան Վազգեն			
Խաչատրյան Վլադիմիր			
Սաֆարյան Անդրոնիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N21

27.11.2015թվական

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը՝

11.1.2 պահուստային ֆոնդ հատվածի 4891 պահուստային միջոցներ հոդվածը պակասեցնել 100.0 հազ. դրամով և այն ուղղել 8.2.4. այլ մշակույթային կազմակերպություններ հատվածի 4269 հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Եփրեմյան Արման			
Զարգարյան Կամո			
Պետրոսյան Վազգեն			
Խաչատրյան Վլադիմիր			
Սաֆարյան Անդրոնիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ